ԱՐՑԱԽՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ (1918–1920 թթ.)

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Պատմագիտության մեջ տարածված է այն տեսակետը, թե Հայաստանի Առաջին հանրապետության բարձրագույն իշխանությունները՝ խորհրդարանը և կառավարությունը, բավարար ուշադրություն և հետևողականություն չեն ցուցաբերել Արցախի խնդրում, որը իբր այդ պատճառով էլ հայտնվեց Ադրբեջանի վարչատարածքային սահմաններում: Սակայն որքան էլ ծանր էր Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակը, հանրապետության կառավարությունը անում էր հնարավորին ամեն ինչ՝ տեր ու պաշտպան կանգնելու արցախահայության արդար դատին՝ «Ղարաբաղը համարելով անբաժանելի մասը Միացյալ և Անկախ Հայաստանի Հանրապետության»[1]: Նույն կերպ Արցախին իր համակողմանի աջակցությունն է ցույց տվել Հայաստանի խորհրդարանը: Նրա նիստերում պարբերաբար քննարկումների նյութ է դարձել Արցախի խնդիրը: Արցախին օգնելու նպատակով դեռ 1919թ. կեսերին հիմնվել էր դրամական ֆոնդ՝ 8 մլն ռուբլու չափով: Այդ գումարից 1,5 մլն-ը հատկացվում է «Ղարաբաղի զորամաս» կազմակերպելու համար: Նորակազմ զորամասը բաղկացած էր մեկ հետևակ գումարտակից, 2 լեռնային հրանոթից և 54 հեծյալ հետախույզներից[2]: Համանման օգնություն և այլ ծախսեր կազմակերպելու հետևանքով շուտով Արցախի կարիքների համար հատկացված 8 մլն ռուբլու ֆոնդը սպառվում է, և կառավարությունը հարց է բարձրացնում կրկին 8 մլն ռուբլու վարկ բացելու մասին[3]:

Արցախին օգնություն էր ցույց տրվում ոչ միայն պետական-կառավարական մակարդակով, այլ նաև ՀՀԴ կուսակցական մարմինների միջոցով: Այսպես, օրինակ, 1919թ. ամռանը ՀՀԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն Ղարաբաղի Ազգային խորհրդին էր տրամադրել (փոխանցել) 1,06մլն ռուբլու օժանդակություն[4]: Այնպես որ Հայաստանի խորհրդարանը, կառավարությունը, ինչպես նաև ՀՀԴ-ն՝ որպես կառավարող կուսակցություն, արցախյան խնդրի պասիվ դիտողի դերում չեն գտնվել, այլ հնարավոր բոլոր միջոցներով աշխատել են այն միավորված տեսնել ՀՀ կազմում:

Հարկ է նշել, որ մինչև 1920թ. գարունը ՀՀ կառավարությունը Արցախի և Զանգեզուրի հարցում առաջնորդվում էր արտաքին քաղաքականության այն կուրսով, որ շուտով Փարիզի խաղաղության կոնֆերանսը արդարությամբ կլուծի նաև հայ-ադրբեջանական այս կնճիռը, ուստի և ձեռնպահ էր մնում հիմնահարցի լուծման ուժային մեթոդներից: Նույն կերպ, արցախահայությունը ևս սպասում էր խաղաղարար կոնֆերանսի արդար վճռին: Բայց երբ պարզվում է, որ Ադրբեջանը ծրագրել է Ղարաբաղը և Զանգեզուրը հայաթափ ու բնաջինջ անելու միջոցով գրավել ու ենթարկել իրեն, Հայաստանը ևս, բնականաբար, փոխում է իր դիրքորոշումը: Տեղի հայությունը դիմում է ինքնա-

---

[1] Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ.Է, Լոս Անջելես, 1952, էջ 205:

[2] Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1-ին, թ. 132:

[3] Նույն տեղում, թ. 15:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 76, թ. 10:

պաշտպանության: Ճակատագրական դեպքեր են կատարվում 1920թ. մարտի վերջերին ու մասնավորապես մարտի 22–23-ի գիշերը:

Արցախ-Զանգեզուրում ծավալվող դեպքերի քննությանն էր ամբողջովին նվիրված խորհրդարանի 1920թ. ապրիլի 3-ի №78-րդ նիստը: Նիստում ընդարձակ ու հանգամանալի զեկուցումով հանդես եկավ վարչապետ և արտ. գործ. նախարար Ալ. Խատիսյանը[5]:

Ադրբեջանական իշխանությունները, մեղադրելով արցախահայերին ապստամբության նախապատրաստվելու մեջ, որոշում են կանոնավոր զորքերով հարձակվել տեղի հայության վրա, կոտորել կամ արտաքսել երկրամասից: Մարտի վերջերին տեղի են ունենում Շուշիի և այլ բնակավայրերի հայության կոտորածները: Վարչապետն իր զեկուցման մեջ բացահայտում է Ադրբեջանի կառավարության նենգ դավերը և հայաջինջ ծրագրերը: Խորհրդարանի հավանությամբ և Հայաստանի կառավարության հանձնարարությամբ տարածաշրջանի հայությանը օգնության է հասնում հայկական զորամասը՝ Դրոյի հրամանատարությամբ: Տեղում հայ ժողովրդի պայքարը ազատության և անկախության համար ղեկավարում էր Ղարաբաղի հայ ազգային խորհուրդը, որը 1918թ. մայիսից մինչև 1920թ. մայիսը իր հրավիրած տասը համագումարներում և դրանցից հետո էլ չի ընդունել և չի ճանաչել Ադրբեջանի իշխանությունը[6]: Համատեղ ջանքերի շնորհիվ Լեռնային Ղարաբաղը գործնականում միացվում է Հայաստանի Հանրապետությանը:

Մեկ ամիս անց՝ ապրիլի վերջերին Ադրբեջանում Արցախի ու Զանգեզուրի հիմնահարցի առնչությամբ ծավալվեցին շատ ավելի մեծ իրադարձություններ: Այս կապակցությամբ 1920թ. մայիսի 3-ին հրավիրվեց խորհրդարանի արտահերթ նիստ: Նիստում լսվեց ու քննարկվեց արտ. գործ. նախարար Հ.Օհանջանյանի հաղորդումը վերջին շաբաթվա ընթացքում Անդրկովկասում և հատկապես Ադրբեջանում կատարված քաղաքական դեպքերի մասին, դեպքեր, որոնք ուղղակիորեն առնչվում էին Հայաստանի հետագա ճակատագրին: Երբ ադրբեջանական 10 հազարանոց կանոնավոր և նույնքան էլ կամավոր զորքերն ուղարկվել էին Ղարաբաղ և զբաղված էին տեղի բնակչության կոտորածով, այդ նույն ժամանակ Ադրբեջանի հյուսիսային սահմանին հայտնված 11-րդ կարմիր բանակը, քեմալական Թուրքիայի գիտությամբ և Ադրբեջանի խորհրդարանի համաձայնությամբ, *ապրիլի 28-ին* մուտք գործեց Բաքու, և Ադրբեջանը խաղաղ ճանապարհով հայտարարվեց խորհրդային: Այս թավշյա հեղաշրջման նպատակն էր Կարմիր բանակի ուժերի միջոցով լուծել մուսավաթների ծրագիրը՝ գրավել և Ադրբեջանին միացնել հայկական տարածքները (Ղարաբաղը, Զանգեզուրը, Շարուր-Նախիջևանը), դրանով իսկ «լուծել իրենց ազգային խնդիրները»[7]: Խորհրդային Ռուսաստանն էլ իր հերթին հույսեր էր փայփայում, համաշխարհային հեղափոխության կարգախոսով, ապահովել Հայաստանի վրայով Խ. Ռուսաստանի և «կարմիր» Ադրբեջանի ցամաքային կապը իրեն հեղափոխական հայտարարած քեմալական Թուրքիայի հետ՝ Անտանտի դեմ համատեղ պայքարելու և համաշխարհային հեղափոխության կրակը ամբողջ Արևելքի մուսուլմանական երկրները տարածելու համար: Ի կատարումն այդ ծրագրի, Ադրբեջանի

---

[5] Այս մասին հանգամանալից տե՛ս Առերեսում, 1955,N14, էջ 4–5:

[6] Л.А.Хуршудян, Истина – единственный критерий исторической науки, Е., 1989, с. 9 – 25.

[7] Հ.Ռ.Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, էջ 400:

խորհրդայնացումից տառացիորեն երկու օր անց՝ ապրիլի 30-ին, ստացվեց Ադրբեջանի խորհրդային հանրապետության արտ. գործ. կոմիսարի պաշտոնակատար Հուսեինովի վերջնագիրը՝ ուղղված Հայաստանի կառավարությանը: Նրանում ասված էր. «Ադրբեջանի խորհրդային բանվորագյուղացիական կառավարությունը, հանձինս հեղափոխական կոմիտեի, պահանջում է. նախ՝ մաքրել ձեր զորքերից Ղարաբաղի և Զանգեզուրի տարածքը, երկրորդ՝ քաշվել դեպի ձեր սահմանները, երրորդ՝ դադարեցնել ազգամիջյան կոտորածը: Հակառակ դեպքում, Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հեղափոխական կոմիտեն իրեն կհամարի պատերազմական դրության մեջ Հայաստանի Հանրապետության հետ: Վերջնագրի պատասխանի համար տրվում է երեք օր ժամանակ»:[8] Վերջնագրում Նախիջևանի անունը չէր հիշատակված այն պարզ պատճառաբանությամբ, որ, սկսած 1919թ. կեսերից, Նախիջևանը չէր ենթարկվում ՀՀ-ին, ուստի և թուրքերը Նախիջևանի հարցը գործնականում համարում էին լուծված:

Հաջորդ օրը՝ մայիսի 1-ին ստացվեց մեկ այլ վերջնագիր՝ Կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի նախագահ Օրջոնիկիձեի և անդամներ Կիրովի, Մեխանոշինի և Լևանդովսկու ստորագրությամբ: «Հայաստանի և մեր բարեկամ դաշնակից Խորհրդային Ադրբեջանի սահմաններում շարունակվում են պատերազմական գործողությունները Հայաստանի և Ադրբեջանի միջև: Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարությունն իր սրբազան պարտքն է համարում ամբողջ ուժով օգնության հասնել Ադրբեջանի բոլոր աշխատավորների անունից իրեն դիմող Ադրբեջանի բանվորագյուղացիական կառավարությանը, հաստատելու այնտեղ բանվորագյուղացիական իշխանություն: ՌՍՖԽ հանրապետության անունից առաջարկում եմ Հայաստանի կառավարությանը անմիջապես դադարեցնել պատերազմական ամեն գործողությունները խորհրդային Ադրբեջանում և դուրս բերել իր զորքերը նրա սահմաններից: Այդ պետք է կատարվի 24 ժամվա ընթացքում այս առաջարկությունն ընդունելուց հետո: Այս առաջարկության չիրականացումը կընդունվի ՌՍՖԽ հանրապետության կողմից իբրև պատճառ պատերազմական գործողությունների, իսկ ամբողջ պատասխանատվությունն այս բանում կընկնի Հայաստանի կառավարության վրա»[9]: Ինչպես նկատում ենք, երկու դեպքում էլ ձեռագիրը գրեթե նույնն է: Ի դեպ, նշենք, որ ՀՀ-ին ուղղված այս երկու վերջնագրերի ստուգությանը այդ օրերին չէին հավատում Մայիսյան ապստամբությանը նախապատրաստվող հայ բոլշևիկները և դա համարում էին Դաշնակցության հնարած սադրանք[10]: Ադրբեջանի հեղկոմի վերջնագիրը և կարմիր զորքերի առաջխաղացումը դեպի Արցախ որակվում էր որպես դաշնակցական կառավարության հնարած հակահեղափոխական սադրանք և ստահոդ հերյուրանք Խորհրդային Ադրբեջանի, Կարմիր բանակի և բոլշևիկների հասցեին[11]:

---

[8] Հայաստանի պառլամենտի 1920թ. մայիսի 3-ի արտակարգ նիստը, Ե., 1920, էջ 6, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ» 271, թ.206 (Բանվորի ձայն, ԹԻՖլիս, 9. v. 1920):

[9] Հայաստանի պառլամենտի 1920թ. մայիսի 3-ի արտակարգ նիստը, Ե., 1920, էջ 6–7, (Բանվորի ձայն, Թիֆլիս, 9.V. 1920):

[10] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 138, թ. 75:

[11] Ա.Գ.Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Ե., 1923, էջ 14, 20, 29–30, Հ.Ս.Կարապետյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920), Ե., 1961, էջ 107–108, Ա.Հ.Մելքոնյան, Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը, Ե., 1965, էջ 114:

Խորհրդարանի արտահերթ նիստում իր հաղորդման ընթացքում նախարար Հ.Օհանջանյանը պատգամավորներին տեղյակ պահեց այդ վերջնագրերի ու այլ փաստաթղթերի մասին: Այնուհետև արտ. գործ. նախարարը տեղեկացնում է, որ Հայաստանի կառավարությունը, հերքելով վերջնագրերում պարունակված մեղադրանքները, զուսպ և փաստարկված կերպով պատասխանել է դրանց: Մասնավորապես, նա իր պատասխանում պարզաբանել է, որ Ադրբեջանի տարածքի վրա հայկական զորքեր չեն եղել և չկան և որ, ընդհակառակը, «մուսավաթական կառավարության զորքերն ու կազմակերպած բանդաները մինչև այժմ շարունակում են մնալ Հայկական Դարաբաղի շրջանում՝ կոտորելով հայ գյուղացիությանը և այրելով Շուշի քաղաքի հայկական մասն ու բազմաթիվ գյուղերը»[12]: Միաժամանակ հեռագրեր են ուղարկվում Լենինին և Չիչերինին[13]: Հ.Օհանջանյանը առաջարկում էր վերջնագիր ներկայացնող կողմին՝ դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները և սահմանների վերջնական որոշման ու դրացի հանրապետությունների միջև բնականոն հարաբերություններ հաստատելու համար Հայաստանի կառավարության հետ բանակցություններ սկսել[14]: Այլ խոսքով, Հայաստանի կառավարությունը այդ վերջնագրերին պատասխանել է խաղաղասիրական առաջարկություններով՝ բոլոր վիճելի հարցերը լուծել փոխադարձ համաձայնությամբ:

Խորհրդարանը քննարկում է արտ. գործ. նախարարի զեկուցումը: Տեղի է ունենում մտքերի փոխանակում: Ելույթներ են ունենում ՀՀԴ խմբակցության անդամներ Ս.Թորոսյանը, Սեպուհը, Ա.Շիրինյանը, Գ.Բալայանը, Ա.Հովհաննիսյանը, Հ.Բուդաղյանը: Նրանք հավանություն են տալիս կառավարության ձեռնարկած քայլերին ու վարած քաղաքականությանը: Քննարկումների ժամանակ բացահայտ հակակառավարական դիրք է գրավում էսէռական խմբակցությունը: Այս խմբակցության անդամներ Լ.Թումանյանը, Ա.Խոնդկարյանը, Վ.Սինախորյանը, գոտեպնդվելով Կարմիր բանակի մուտքով և Ադրբեջանի խորհրդայնացումով, կարծում էին, որ այժմ հերթը հասել է Հայաստանի «մուսավաթին»՝ Դաշնակցությանը, որպեսզի նա հեռանա ասպարեզից և Հայաստանը խորհրդայնանա[15]: Այս կապակցությամբ ռամկավար գործիչ Արտակ Դարբինյանը իր հուշերում գրում էր, որ, երբ մայիսի 3-ի խորհրդարանի արտակարգ նիստում քննվում էր խորհրդայնացված Ադրբեջանի վերջնագիրը՝ ուղղված Հայաստանի կառավարությանը, սոցիալիստ-հեղափոխականները, ողջունելով ռուս հեղափոխական բանակի մուտքը Անդրկովկաս՝ պահանջեցին, որ «հայ մուսավաթը», այսինքն՝ Դաշնակցությունը հեռանա իշխանությունից, և Հայաստանն էլ ընդունի խորհրդային վարչաձև[16]: Ավելացնենք նաև, որ այդ նույն ժամանակ Արցախի էսէռները, հայ շատ բոլշևիկների ու մենշևիկների պես, հանդես էին գալիս Արցախը Ադրբեջանին միացնելու պահանջով[17]:

Արտախորհրդարանական կուսակցություններից Ադրբեջանի ներկայացրած վերջնագրին ի պատասխան, հայ ազգային կուսակցությունների նման, Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական («սպեցիֆիկների») կուսակցության Երևանի կոմիտեն մայիսի 3-ին հրապարակեց կոչ, որում բողոքում ու դատապարտում էր խորհրդայնացված Ադրբեջանի հան-

---

[12] Հայաստանի պառլամենտի ..., էջ 7:
[13] Նույն տեղում:
[14] Նույն տեղում, էջ 9:
[15] Նույն տեղում, էջ 12:
[16] Ա.Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 436:
[17] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց.1, գ. 52, թ. 52:

դուգն ու սպառնալից պահանջը՝ երեք օրվա ընթացքում Ղարաբաղն ու Զանգեզուրը մաքրելու վերաբերյալ[18]:

Խորհրդարանական քննարկումների շնորհիվ ընդունվեց համապատասխան որոշում: Հովակիմ Բուդաղյանը ՀՀԴ խմբակցության կողմից առաջարկեց հետևյալ բանաձևը. «Լսելով արտ. գործ. նախարարին՝ Ադրբեջանի կառավարության վերջնագրի և նախարարի պատասխանի մասին՝ խորհրդարանը հավանություն է տալիս տված պատասխանին և հրահանգում է կառավարությանը՝ ինքնապաշտպանության բոլոր միջոցները ձեռք առնել՝ ապահովելու հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը և ազատ հայրենիքի անկախությունը»[19]: Խորհրդարանը 33 ձայնով ընդդեմ 4-ի ընդունեց ՀՀԴ խմբակցության կողմից առաջարկված բանաձևը: Նիստն ավարտվեց գիշերվա ժամը 12-ին: Խ. Ադրբեջանի և Կարմիր բանակի հրամանատարության վերջնագրերին շուտով հաջորդում են գործնական քայլերը[20]: Ղարաբաղ են շարժվում մեծ բանակությամբ ադրբեջանական և ռուսական զորքեր: Ադրբեջանի խորհրդայնացումը փաստորեն կանխում է Ղարաբաղը Հայաստանին միացնելու գործընթացը: Տեղի հայությունը, խաբվելով բոլշևիկներին, ընկնում է նրանց սին խոստումների ու կարգախոսների ծուղակը: Մայիս ամսին խորհրդայնանում է Արցախը: Մայիսի վերջերին (26-ին) Դրոն հարկադրված իր զորամասով Արցախից վերադառնում է Զանգեզուր ապա՝ Դարալագյազ: Ավելի ուշ (1921թ. հուլիսին) Արցախի հարցը լուծում են Ադրբեջանի օգտին:

АРЦАХСКИЙ ВОПРОС В ПАРЛАМЕНТЕ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ (1918–1920 гг.)

А.М. АКОПЯН

Резюме

В исторической литературе распространено мнение, что высшие органы власти РА – парламент и правительство – были недостаточно последовательны в решении проблемы Арцаха. Однако руководство республики и парламент, несмотря на трудности и ограниченные возможности, оказывали финансовую помощь и политическое содействие армянам, проживающим на территории Арцаха в их справедливой освободительной борьбе.

3 апреля и 3 мая 1920 года парламент провел 2 специальных заседания, посвященных арцахскому вопросу. На этих заседаниях обсуждались трагические события, происходившие в Арцахе. Оказывая политическое содействие Арцаху, парламент практически признал Арцах неотъемлемой частью Армении. Но 28 апреля 1920г. Азербайджан был советизирован и вследствие этого бывшая мусаватистская двадцатитысячная армия вошла в Карабах и практически приостановила процесс присоединения. В июле 1921г., по решению Кавказского бюро РКП(б), Арцах насильно был присоединен к Азербайджану.

---

[18] ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ, ֆ. 1022, ց. 7, գ. 69, թթ. 1–2:

[19] Հայաստանի պառլամենտի ..., էջ 19, Հառաջ, 8. v. 1920, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 35:

[20] Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 446: